- Լոգանքից հետո մաշկը նրբորեն չորացնել՝ խուսափելով քերծվածքներից,
- Լոգանքից անմիջապես հետո օգտագործել խոնավեցնող և փափկեցնող քսուք,
- Երեխայի մաշկը օրվա ընթացքում մի քանի անգամ պատել խոնավեցնող քսուքով,
- Երեխայի եղունգները կարճ կտրել,
- Երեխայի հագուստը ցանկալի է լինի բամբակյա, քանի որ բրդյա և սինթետիկ հագուստը կարող է գրգռել մաշկը, իսկ անթափանց գործվածքը լրացուցիչ քրտնեցնել երեխային,
- Երեխային պահել զով միջավայրում՝ գերտաքացումից և քրտնելուց խուսափելու նպատակով,
- Ճանաչել գրգռիչ գործոնները և հնարավորինս խուսափել դրանցից:

Հիշեք, որ տարբեր արտաքին ազդակներ կարող են վատացնել մաշկի վիճակը

- Սառը և չոր օդը,
- Բուրդը,
- Փոշին,
- Ջերմաստիճանային տատանումները,
- Քիմիական նյութերը, հոտավետ օճառը,
- Ծխախոտի ծուխը,
- Քրտնելը,
- Որոշակի սննդատեսակների օգտագործումը:

Ե՞ՐԲ ԱՆՀԱՊԱՂ ԴԻՄԵԼ ԲԺՇԿԻ

Ատոպիկ դերմատիտով երեխաները հակված են առաջացնել մաշկային երկրորդային վարակներ:

Պետք է անհապաղ դիմել բժշկի, եթե դիտվել է վարակի միացման օգտին վկայող նշաններ՝

- Ջերմության բարձրացում,
- Վնասված մաշկի շուրջ կարմրություն/տաքություն,
- Թաց արտադրությամբ վերքային մակերեսներ կամ դեղնավուն կեղևապատ օջախներ,
- Դեղնավուն հեղուկով լցված բշտեր:



«Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոց»
Հ. Ներսիսյան 10/7, Երևան 0014,
+374 12345678

«Ուիգմոր ընտանիքի առողջության կենտրոն»
Պուշկին 56, Երևան 0002, Հայաստան
+374 12345677

www.wigmore.am

ԱՏՈՊԻԿ ԴԵՐՄԱՏԻՏ

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

WIGMORE

Ի՞ՆՉ Է ԱՏՈՊԻԿ ԴԵՐՄԱՏԻՏԸ (ՄԱՇԿԱԲՈՐԲ)

Ատոպիկ դերմատիտը (մաշկաբորբ) մաշկի հիվանդություն է, որն ուղեկցվում է քորով: Սովորաբար սկսում է շատ փոքր տարիքում՝ 3-6 ամսականից սկսած, սակայն կարող է հանդիպել ցանկացած տարիքում և համարվում է քրոնիկ, բորբոքային հիվանդություն: Երբեմն մաշկաբորբը կարող է ասոցացված լինել ատոպիկ (ալերգիկ) այլ հիվանդությունների հետ, ինչպիսիք են ասթման, ալերգիկ ռինիտը և սննդային ալերգիան:

Ատոպիկ դերմատիտը վարակիչ հիվանդություն չէ:

Ատոպիկ դերմատիտը ալերգիայի տեսակ չէ, սակայն ալերգիան կարող է դրդիչ գործոն հանդիսանալ:

ԻՆՉՈՒ՞Ց Է ԱՌԱՋԱՆՈՒՄ ԱՏՈՊԻԿ ԴԵՐՄԱՏԻՏ

Ատոպիկ դերմատիտի առաջացման հստակ պատճառը պարզ չէ: Ատոպիկ դերմատիտն առաջանում է գենետիկ նախատրամադրվածությամբ երեխաների մոտ՝ արտաքին տարբեր ազդակների ազդեցության հետևանքով: Ատոպիկ դերմատիտով երեխաների իմուն համակարգը սովորականից արտահայտված պատասխան է տալիս արտաքին ազդակներին, որի հետևանքով առաջանում է մաշկի բորբոքում, իսկ վերջինիս արդյունքում դիտվում է մաշկի կարմրություն, քոր:



Հայտնի է, որ ատոպիկ դերմատիտով երեխաների 20-40%-ն ունենում են գենետիկ փոփոխություն, ինչի հետևանքով մաշկի պաշտպանական ֆունկցիան խախտվում է: Ծնողներից մեկի մոտ առկա ատոպիկ դերմատիտը ռիսկի գործոն է համարվում երեխայի մոտ նույն խնդիրն առաջանալու:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Ատոպիկ դերմատիտի հիմնական նշաններն են մաշկի քորը, չորությունը և կարմրությունը: 2-6 ամսական երեխաների շրջանում առավել բնորոշ է այտերի և ճակատի ախտահարումը: Սովորաբար ցանը սկսվում է այտերին և դեմքին, այնուհետև տարածվում է վերջույթների ծալիչ մակերեսներին՝ արմունկների առաջային մասում և ծնկների հետևի մասում: Սակայն պետք է նշել, որ ցանը կարող է տեղակայվել մաշկի ցանկացած հատվածում:

ԻՆՉՔԱ՞Ն ԺԱՄԱՆԱԿ ԿԱՐՈՂ ԵՆ ՊԱՀՊԱՆՎԵԼ ԳԱՆԳԱՏՆԵՐԸ

Մաշկաբորբը կարող է երկար պահպանվել, հաճախ ախտանիշերը կարող են անցնել և չդրսևորվել ամիսների և նույնիսկ տարիների ընթացքում, սակայն տարբեր արտաքին ազդակների հետևանքով կրկին ի հայտ գալ: Ատոպիկ դերմատիտով երեխաների մոտ կեսը 5-6 տարեկանից հետո մաշկի ախտահարում չեն ունենում: Երբեմն գանգատները կարող են վերսկսվել դեռահասային տարիքում՝ հորմոնալ փոփոխությունների, սթրեսի կամ կոսմետիկ նյութերի կիրառման հետևանքով:

ԻՆՉՊԵ՞Ս ԱԽՏՈՐՈՇԵԼ

Ատոպիկ դերմատիտը ախտորոշվում է հիվանդության պատմության և երեխայի զննման միջոցով: Չկա որևէ հատուկ հետազոտություն, որի միջոցով բժիշկը ախտորոշում է ատոպիկ դերմատիտ: Հետևաբար, շատ կարևոր է մանրամասն ներկայացնել բժշկին երեխայի հիվանդության պատմությունը:
Երեխային զննելով՝ բժիշկը կժխտի մաշկային այլ հիվանդությունները, որոնք կարող են նմանատիպ գանգատներով ընթանալ:



Շատ հազվադեպ, դերմատիտի համառ ընթացքի դեպքում, հնարավոր է որոշ հետազոտությունների իրականացման կարիք լինի՝ ավելի ճիշտ կողմնորոշվելու համար (արյան ընդհանուր քննություն, մաշկային հատուկ թեստեր):

ԻՆՉՊԵ՞Ս ԲՈՒԺԵԼ

Ատոպիկ դերմատիտի բուժման հիմքում ընկած է մաշկի ճիշտ խնամքը: Չկա որևէ դեղամիջոց, որը կարող է վերջնական բուժել դերմատիտը:

Վարման նպատակն է՝

- կանխել մաշկի ախտահարման կրկնությունները,
- պակասեցնել մաշկի չորությունը և բորբոքումը,
- հանգստացնել քորը,
- կանխարգելել երկրորդային վարակի միացումը:

Արդյունքի հասնելու լավագույն միջոցը մաշկի խոնավեցումն է՝ խոնավեցնող քսուքների օգտագործմամբ:

Երբեմն միայն խոնավեցնող նյութերը բավարար չեն լինում, կարիք է լինում բուժմանն ավելացնել տեղային հակաբորբոքային՝ հորմոնալ/ստերոիդային քսուքներ: Հիշեք, որ այս քսուքները պետք է օգտագործել միայն բժշկի նշանակումով և առավելագույնը 1 շաբաթ:

Քորը կառավարելու նպատակով հնարավոր է անհրաժեշտ լինի հակաալերգիկ դեղորայք ընդունել: Վարակի դեպքում բժիշկը կարող է տեղային կամ խմելու հակաբիոտիկներ նշանակել:
Հազվադեպ, երբ հաստատվել է, որ ատոպիկ դերմատիտի պատճառական գործոն է այս կամ այն սննդային ալերգենը, բժիշկը կարող է խորհուրդ տալ երեխայի սննդակարգից բացառել որոշակի սնունդ, օրինակ՝ կաթ, ձու, ընդեղեն և այլն: Հիշեք, որ նման սահմանափակող սննդակարգերը կարող են ունենալ անցանկալի բարդություններ, և նմանատիպ միջամտության կարիք հազվադեպ է դիտվում:

ԻՆՉՊԵ՞Ս ԽՆԱՄԵԼ ԱՏՈՊԻԿ ԴԵՐՄԱՏԻՏՈՎ ԵՐԵԽԱՅԻ ՄԱՇԿԸ

- Երեխային լողացնել օրը 1-2 անգամ գոլ ջրով,
- Լոգանքի համար օգտագործել օճառ չպարունակող, ոչ կոսմետիկ լոգանքի միջոցներ,